ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ
«ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՇԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«1981թ. հունվարի 28-ի Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի Կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) առաջին միջազգային գործիքն է, որը նախատեսում է պաշտպանության մեխանիզմներ անհատների անձնական տվյալների հավաքագրման և մշակման ժամանակ հնարավոր չարաշահումների դեմ: Կոնվենցիան տրամադրում է անձնական տվյալների մշակման երաշխիքներ և արգելում է հատուկ կատեգորիայի զգայուն անձնական տվյալների մշակումը իրավական երաշխիքների բացակայության պայմաններում:[1]

Կոնվենցիայի նպատակն է ապահովել անհատների անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում նրանց պաշտպանությունը, ինչպես նաև նպաստել այդ անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների, մասնավորապես մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հարգմանը:[2] Կոնվենցիայի գլխավոր նպատակներից է իրազեկել անհատներին այլ անձանց կողմից իրենց անձնական տվյալների մշակման մասին՝ ելնելով անձի ինքնավարության և անձնական տվյալները վերահսկելու իրավունքների կարևորությունից: Կոնվենցիան նախատեսում է, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը պետք է դիտարկվի ըստ հասարակության մեջ դրա դերի և համատեղելի լինի մարդու այլ իրավունքների և հիմնարար ազատությունների, այդ թվում՝ արտահայտվելու ազատության հետ: Կոնվենցիան սահմանում է անձնական տվյալների մշակման որոշակի պայմաններ և սահմանափակումներ, որոնց նպատակն է ապահովել հավասարակշռություն տարբեր շահերի միջև: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կոնվենցիան 2012թ. մայիսի 9-ին:

Կոնվենցիայի փոփոխման անհրաժեշտությունը պայմանավորված էր մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, մասնավորապես մասնավոր կյանքի ոլորտում ծագած նոր մարտահրավերների հետ: Եվրոպայի խորհրդի բացատրական զեկույցի 1-ին կետի համաձայն՝ նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՏ) ներդրման և անձնական տվյալների հոսքերի աճի պայմաններում անհրաժեշտ էր լուծել անձնական կյանքի պաշտպանության ոլորտում ծագած խնդիրները:[3]

«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ընդունվել է Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների և Կոնվենցիան վավերացրած այլ պետությունների կողմից:

Արձանագրության նպատակն է լուծում տալ Կոնվենցիայի այն խնդիրներին, որոնք առաջացել են նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման հետևանքով, օրինակ՝ ծագել էր անհրաժեշտություն ամրագրել թափանցիկության,

---

[1] https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/108:

[2] https://rm.coe.int/16808ade9d // https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80554:

[3] https://rm.coe.int/cets-223-explanatory-report-to-the-protocol-amending-the-convention-fo/16808ac91a:

համաչափության, data minimisation, privacy by design սկզբունքները: Արձանագրությունը նաև ամրապնդում է Կոնվենցիայի արդյունավետ կենսագործման մեխանիզմը:[4]

Արձանագրությամբ նախատեսվում է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում տարբեր իրավական համակարգերի կարգավորումների մոտարկում՝ նպատակ ունենալով Կոնվենցիայի կարգավորումները հնարավորինս մոտեցնել ԵՄ կարգավորումներին:

«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությունը ստորագրել է 36 պետություն, իսկ վավերացրել է Եվրոպայի խորհրդի 5 անդամ-պետություն, որոնց թվում՝ Բուլղարիան, Խորվաթիան, Լիտվան, Լեհաստանը, Սերբիան): Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2018 թվականի հոկտեմբերի 10-ին:

Արձանագրությամբ նախատեսվում է Կոնվենցիայի սկզբունքային դրույթների փոփոխություն, ինչպես նաև ուժը կկորցնի Կոնվենցիային կից՝ Վերահսկիչ մարմինների և տվյալների անդրսահմանային հոսքերի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը:

Արձանագրությունը նախատեսում է հետևյալ հիմնական փոփոխությունները.

• Արձանագրությունը սահմանում է տվյալների մշակման օրինականության առավել խիստ պահանջներ, ինչպես օրինակ՝ տվյալների հստակ արտահայտված, կոնկրետ և իրավաչափ նպատակներով հավաքագրման, այլ նպատակներով տվյալների մշակման արգելքը, տվյալների մշակման՝ հետապնդվող իրավաչափ նպատակին համաչափության, բոլոր փուլերում շահերի արդար հավասարակշռության ապահովման և պահանջներ.

• Պետությունը պարտավորվում է ապահովել, որպեսզի անձի տվյալների մշակումը իրականացվի տվյալ անձի ազատ և տեղեկացված համաձայնության հիման վրա կամ օրենքով սահմանված որևէ այլ իրավաչափ հիմքով:[5]

• Արձանագրությունը սահմանում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքի և այլ իրավունքների, այդ թվում՝ արտահայտվելու ազատության իրավունքի հարաբերակցության ուղենիշներ:[6] Անձնական տվյալների պաշտպանության և խոսքի ազատության հարաբերակցության ուղենիշների հաշվառմամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպանի) տարեկան հաղորդումներում իրականացվել է վերլուծություն, ինչպես նաև հրապարակվել են Պաշտպանի իրավական չափանիշները:[7] Ըստ այդմ, տեղեկություններ ստանալու իրավունքը իրացնելիս իրավակիրառը պարտավոր է ապահովել երկու իրավական արժեքների հավասարակշռումը:

---

[4] https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/223 // https://rm.coe.int/16808accf8:

[5] Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրություն, հոդված 7:

[6] Եվրոպայի խորհրդի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրության բացատրական զեկույցի 11-րդ կետ, https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016808ac91a

[7] Տե՛ս 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման «Կարծիքի արտահայտման ազատությունը, տեղեկություններ ստանալու և անձնական տվյալների պաշտպանության իրավունքներ» բաժնում, էջ 259 // Իրավական չափանիշներ լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ ստանալու հարցման և այդ առնչությամբ պետական մարմնի պարտականության վերաբերյալ, հասանելի է https://www.ombuds.am/images/files/0b93e5799c7520fdc31d633d009a7073.pdf:

• Արձանագրության 10-րդ հոդվածում նախատեսված են անձնական տվյալների մշակման թափանցիկության հստակ չափանիշներ: Անձնական տվյալների պաշտպանության արդյունավետությունը, արդար և թափանցիկ մշակումն ապահովելու նպատակով վերահսկիչը (controller) և մշակողը (processor) պարտավոր են անհրաժեշտ տեղեկություններ տրամադրել տվյալների սուբյեկտին (data subject):[8]

• Արձանագրությամբ առավել հստակ է սահմանվում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի նկատմամբ կիրառելի չափանիշները, օրինակ այն, որ լիազոր մարմինը պետք է իր գործառույթները ու լիազորություններ իրականացնելիս լինի միանգամայն անկախ և անկողմնակալ և այդ կապակցությամբ չպետք է ընդունի որևէ միջնորդություններ և ցուցումներ: Արձանագրությունը սահմանում է, որ տվյալների պաշտպանության լիազոր մարմինը պետք է իրավասու լինի Կոնվենցիայի դրույթների խախտումների վերաբերյալ որոշումներ կայացնել և կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ:[9]

Իրականացնելով Պաշտպանի՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման իրականացման գործառույթը՝ Պաշտպանը 2019 թվականի տարեկան հաղորդման մեջ արձանագրել է անձնական տվյալների պաշտպանության օրենսդրական ոչ լիարժեք կարգավորման խնդիրը դատական ակտերի հրապարակման հարթակներում:[10] Խնդրի առնչությամբ առաջարկվել է ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիրը, ինչպես նաև հասարակությանն իրազեկել այն մասին, որ ՀՀ դատական դեպարտամենտին ուղղված դիմումի հիման վրա հնարավոր է սահմանափակել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված դատական ակտերում անձնական տվյալների հասանելիությունը:

Արձանագրության կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ապահովման վերաբերյալ Պաշտպանի տարեկան զեկույցում տեղ գտած առաջարկները արտահայտում են Արձանագրության չափանիշների էությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը կարևորում է Արձանագրության վավերացումը՝ որպես անձնական տվյալների պաշտպանության իրավունքի երաշխավորմանն ու ՀՀ ներպետական օրենսդրությունն ու պրակտիկան միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված գործընթաց:

---

[8] Հոդված 10

[9] Հոդված 19

[10] Տե՛ս 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման «Կարծիքի արտահայտման ազատությունը, տեղեկություններ ստանալու և անձնական տվյալների պաշտպանության իրավունքներ» բաժնում, էջ 269: